լսակուսանս անգանէր, որպէս Մովսէս ի խորտակումն տախտակին. և դարձ առնէր առ Աստուած ի նա ընկենլով զելս իրին՝ որոյ հընարաւոր էր անհնարն։ Կրկին նորոգէր զպահ-սըն և զաղաւթսն, ընթանալով զառ ի վեր ընդ ափունս Նփրատայ, յայրէ յայլ անցանելով մինչև ի գրղեակն [թղ. 14բ] Պալունեաց՝[1] և անդ զկա առնոյր ի փոքրագոյն այրի յաւուրս քառասնորդացն. և զեւթն եւթնակսն անսրբազ անցուցանէր զտիւ և զգիշեր, երգելով զերգս երից մանկանցն, և շարաբան եղանակ ապաշխարութեան՝ ըստ թըւոյ աւուրց պահոցն, զոր ընկալեալ երգէ եկեղեցի սուրբ։

Եւ ի կատարման եւթն երեկացն ի պահու կալով, այրաձև տեսանէր զհրեշտակն որպէս Ամրակումն և հսկողն. մանաւանդ թէ գերագոյն ևս՝ դանիլապէս և մովսիսաբար, զՏէրրն հրեշտակաց՝ մարգարէական աչաւք՝ որ գրէր մատանագիծ ի սալս սրտի իւրոյ[2] չորեք-

---

1. Վարդ Պատմ. «Աչով իւրով դրոշմեալ առաջի նորա, որպէս մեծին Մովսիսի ի լեառն Սինայ, ի լեառն Բալուայ որպէս տակաւին ցուցանի դրոշմն առտուածագիծ վիմին եւ նկարք գրելոյն»։

2. Խոր. Գր. Գ. գլ. ԾԳ. «ի սրտի գործարանի երեւուրացեալ հոգւոյն աչաց թաթ ձեռին սլոյ՝ գրելով՝ ի վերայ վիմի»։